

Հայաստանի ազգային ազրարային համալսարան

**Գիտական ղեկավարի պարտականությունները և մագիստրանտի կողմից
ատենախոսության կատարման կարգը**

Մագիստրանտի գիտական ղեկավարը ուղղություն է տալիս մագիստրանտի գիտական աշխատանքին՝ օգնելով նրան ճիշտ գնահատելու որոշումների հնարավոր տարբերակները, սակայն որոշումների ընտրությունը իր իսկ մագիստրանտի խնդիրն է, և նա, որպես կատարվող աշխատանքի հեղինակ, պատասխանատու է ընդունված որոշումների, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիության և փաստացի ճշտության համար:

Գիտական ղեկավարի անմիջական մասնակցությամբ մշակվում է մագիստրոսական գիտական աշխատանքի բանվորական պլանը և մշակվում կատարվելիք գիտական հետազոտության մտահղացման կանխատեսումը:

Գիտական ղեկավարը մագիստրանտի հետ տանում է նաև այլ աշխատանքներ, մասնավորապես՝

1. Խորհուրդ է տալիս ըստ թեմայի ընտրել գրականություն, տեղեկագրեր, վիճակագրական, արխիվային նյութեր և այլ աղբյուրներ
2. Մագիստրանտի հետ անցկացվում է նախատեսված և համակարգված զրույցներ և խորհրդատվություններ
3. Գնահատում է կատարված գիտական աշխատանքի բովանդակությունն, ըստ համապատասխան բաժինների և ամբողջությամբ
4. Անձամբ մասնակցում է մագիստրանտի գիտական հաշվետվություններին և ատեստավորումներին
5. Հետևում է ատենախոսության ձևավորմանը՝ պահանջվող ստանդարտներին համապատասխան
6. Համաձայնություն է տալիս ատենախոսությունը պաշտպանության ներկայացնելու վերաբերյալ
7. Հետևում է ատենախոսությունը ժամանակին մագիստրատուրայի բաժին ներկայացնելուն:

Այսպիսով, գիտական ղեկավարը մագիստրանտին գիտական և մեթոդական օգնություն է ցույց տալիս, վերահսկում է աշխատանքի կատարումը, խորհուրդներ է տալիս այս կամ այն որոշման ընդունման նպատակահարմարության, ինչպես նաև եզրակացություն է ներկայացնում աշխատանքն ավարտելու վերաբերյալ: Մագիստրոսական ատենախոսությունում ամփոփված որոշումների, լուծումների, եզրակացությունների և բոլոր տվյալների համար պատասխանատու է մագիստրանտը:

Ավարտված ատենախոսությունը գիտական ղեկավարի և համապատասխան ամբիոնի կարծիքով ներկայացվում է մագիստրատուրայի բաժին, որտեղից էլ ուղարկվում է գրախոսման ՀԱԱՀ-ից դուրս՝ տվյալ բնագավառի գիտության կամ արտադրության հեղինակավոր մասնագետներին: